

ԳԱՐԵԳԻՆ Բ ԾԱՌԱՅ ՅԻ ՔԻ, ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱԶԳԻ
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ,
ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ
ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՒՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ
ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՎ ՀԱՐԱԶԱՏ ԶԱՒԱԿՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ
ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ԿԻՐԱԿՈՍ ԳՈՒՅՈՒՄՋԵԱՆ,
ՈՐ Ի ՔՈՒՎԷՅԹ

Համայն Հայութեան Սրբութիւն Սրբոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական ջերմ ողջոյն և օրհնութիւն Ձեզ՝ մեր ժողովրդի արժանաւոր զաւակիդ, որ զօրակից էք վերանկախացեալ մեր Հայրենիքում ծաւալուող եկեղեցաշինութեան ազգօգուտ և աստուածահաճոյ գործին:

Աստուծոյ նախախնամ կամօք ամիսներ առաջ Դուք ուխտաւորաբար եղաք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, և Մենք առիթն ունեցանք ճանաչելու Ձեզ և Ձեր հայրենանուէր ու եկեղեցասէր ոգին: Եւ այսօր մեծ գոհունակութեամբ ենք անդրադառնում Ձեր ազնիւ յանձնառութեանը, որով բարի նպաստ բերեցիք Հայաստանում քրիստոնէութեան պետական կրօն հռչակման 1700-ամեակի խորհրդանիշը հանդիսացող քաղաքամայր Երևանի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ մայր եկեղեցու բարեկարգման աշխատանքներին՝ պարգևաբերելով մայր եկեղեցու աստիճանավանդակի ճաղաշարերը:

Փառք ենք մատուցում Բարձրեալ Տիրոջը, որ Եկեղեցին Հայաստանեայց օրհնուած է Ձեզ պէս եկեղեցասէր հայորդիներով, որոնց պատրաստակամութեամբ և գովելի աջակցութեամբ այսօր բարեկարգուած են բազմաթիւ նորոգեալ և նորակառոյց եկեղեցիներ, որտեղ մեր հոգևոր սպասաւորներն իրենց ամենօրեայ աղօթքներով Ամենապարգև Աստուծոյ օրհնութիւններն ու երկնային շնորհներն են հայցում հաւատացեալ մեր ժողովրդի համար:

Մեծարգոյ պարոն Գույումջեան,

Ձեր հաւատաւոր ընթացքի ու մեր Եկեղեցուն մատուցած բարի ծառայութիւնների բարձր գնահատանքով՝ Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ

պատուոյ բարձր շքանշանը:

Հաւատում ենք, որ շնորհեալ պարգևը Ձեզ համար նոր խրախոյս պիտի լինի՝ նոյն եռանդով շարունակելու ազգաշէն ու եկեղեցանուէր Ձեր գործունէութիւնը:

Ի խորոց սրտի Մեր աղօթքն ու մաղթանքն է, որ Բարին Աստուած պարգևի Ձեզ ու Ձեր ընտանեաց անդամներին քաջառողջ կեանքի արևշատ ու երջանիկ բազում օրեր և գործոց յարանորոգ յաջողութիւններ:

Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ և ընդ ամենեսեանս. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 19-ն Սեպտեմբերի
ի թուին Տեառն 2003 և ի թուին հայոց ՌՆԾԲ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 189